

## ԱՆԳԼԵՐԵՆԻ ԲԱՅԻ ԱՆԴԵՄ ՉԵՎԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Անգլերենում բայի անդեմ ձևերն են infinitive-ը, gerund-ը և participle-ը, որոնց մի շարք առանձնահատկությունները թարգմանության ընթացքում պահանջում են զգույշ մոտեցում՝ ինչպես հարկն է փոխանցելու համար տվյալ բառերի իմաստային յուրահատկությունները: Չարտահայտելով դեմք և թիվ անգլերենի բայի անդեմ ձևերը չեն կարող համաձայնել ենթակայի հետ, հետևաբար, երբեք հանդես չեն գալիս պարզ ստորոգյալի գործառնությով: Բայի անդեմ ձևերի մեկ այլ ընդհանուր առանձնահատկությունն այն է, որ ժամանակի կատեգորիան այստեղ ունի հարաբերական բնույթ, այսինքն՝ նրանց ժամանակային տարբերակումները նշանակություն են ձեռք բերում միայն տվյալ նախադասության մեջ ժամանակային դիմավոր ձևերի (ստորոգյալի) հետ զուգահեռ:

Իրենց պատմական զարգացման արդյունքում անդեմ ձևերը առնչվում են ոչ բայական կատեգորիաների հետ և ստեղծում սերտ կապեր՝ gerund-ը և infinitive-ը գոյականի հետ, իսկ participle-ը՝ ածականի: Համեմատական պլանով ավելի մանրամասն քննարկենք անդեմ ձևերի յուրահատկությունները և նրանց թարգմանության միջոցները:

Վերը նշված անդեմ ձևերից երկուսը՝ gerund-ը և participle I-ը ունեն միևնույն վերջավորությունը՝ *-ing*: Այս հանգամանքը բարդացնում է խնդիրը նրանով, որ *-ing* վերջավորությունը բնորոշ է նաև երրորդ խոսքի մասին՝ բայանուն գոյականին: Այսպիսով *-ing* վերջավորությամբ բառերի թվին պատկանում են՝

ա) գերունդիումը (gerund)՝ *Voltmeters are used for measuring voltages. Վոլտմետրը գործածում են չափելու համար*<sup>1</sup>:

բ) բայանուն գոյականը (verbal noun)՝ *The measuring of voltage is effected by means of voltmeters. Լարման չափումը իրացվում է վոլտմետրի միջոցով*:

գ) ներկա դերբայը (present participle)՝ *Measuring voltage we use voltmeters. Լարումը չափելիս մենք գործածում ենք վոլտմետր*:

<sup>1</sup> Այս և ստորև նշված օրինակները մեքսերված են Internet-ից:

Նման քերականական համանունությունը առաջացնում է *-ing* վերջավորությամբ բառերը ճիշտ թարգմանելու և նախադասության մեջ դրանց գործառույթը պատշաճ սահմանելու խնդիր:

Gerund-ը հատուկ քերականական ձև է, որ չկա հայերենում: Gerund անվանումն առաջացել է լատիներեն *gerere* բայից, որ նշանակում է *գործել*: Այն ցույց է տալիս, որ gerund-ի միջոցով արտահայտվում է կատարումը, գործողության կայացումը, նրա ընթացքը: Իմաստով gerund-ը նման է հայերենի ք և ում վերջավորություններով գործողություն արտահայտող բառերին: Ինչպես օրինակ *վազք, բախում*: Gerund-ը հնարավորություն է ընծեռում խուսափել երկար երկրորդական նախադասություններից և աջակցում է սեղմ ու կարճ կառույցների ստեղծմանը: Պատմականորեն *-ing*-ով վերջացող այս ձևը սկզբնապես անվանական կազմություն էր, գոյականին բնորոշ բոլոր գծերով: Աստիճանաբար միջին և նոր անգլերենի զարգացման ընթացքում միտում առաջացավ բայերից ստեղծել *-ing* վերջավորությամբ գոյականներ, և այս բայանուն գոյականները, բնականաբար, պահպանում էին նաև որոշ բայական գծեր<sup>2</sup>: Այսպիսով, լեզվում առաջացավ բայի և գոյականի միջև միջանկյալ նոր ձև gerund-ը: Gerund-ի երկակի բնույթի հետքերն արդի անգլերենում պահպանվել են նրա գործառույթներում:

Այն ունի և՛ գոյականի, և՛ բայի գծեր ու պահպանում է կապը այս խոսքի մասերից յուրաքանչյուրի հետ: Ծագում է բայարմատից, ունի ժամանակային և կերպային առանձնահատկություններ *I know of his leaving Frisco. Ես գիտեմ Սան Ֆրանցիսկոյից նրա մեկնելու մասին: I know of his having left Frisco. Ես գիտեմ, որ նա մեկնել է Սան Ֆրանցիսկոյից*: Ընդունում է ուղիղ խնդիր *Their aim was exploring the Pole. Նրանց նպատակն էր հետազոտել բևեռը*: Եվ կարող է ուղեկցվել մակբայով *Writing quickly is tiring. Արագ գրելը հոգնեցուցիչ է*:

Gerund-ը նախադասության մեջ կատարում է հետևյալ գործառույթները՝ ենթակա, ուղիղ խնդիր, բաղադրյալ ստորոգյալի մաս, որոշիչ (միշտ նախդրի հետ, հաճախ *of* նախդրի), ժամանակի, նպատակի, պատճառի, ձևի պարագաներ (միշտ նախդրի հետ):

Նկատի առնելով այն հանգամանքը, որ gerund-ը հայերենում չունի իր համարժեքը, նրա թարգմանությունն իրացվում է մի շարք ձևերով, հատկապես՝ ենթակային և խնդրի դեռում հանդես եկող gerund-ը առավելապես թարգմանվում է գոյականի, երբեմն՝ անորոշ դերբայի, ինչպես նաև վերջինիս հոլովված ձևի

<sup>2</sup> George O. Curme, "A Grammar of English language" – Infinitive.

օգնությամբ, նաև ըղձական եղանակով ստորադասական նախադասությունների միջոցով:

*Splitting the atom is a difficult task. Ատոմի ճեղքումը դժվար առաջադրանք է: / Ատոմը ճեղքելը դժվար առաջադրանք է: Transformers are used for changing D.C. into A.C. Տրանսֆորմատորները օգտագործվում են փոփոխական հոսանքը հաստատուն հոսանք դարձնելու համար:*

Բաղադրյալ gerund-ն այս գործառնությով սովորաբար թարգմանվում է երկրորդական նախադասության միջոցով, ընդ որում թարգմանությունն սկսվում է *այն, որ* բառերով *His having obtained a residue at such a temperature was a great success. Այն, որ նրան հաջողվել է նստվածք ստանալ նման քերմաստիճանի պայմաններում, մեծ ձեռքբերում է: They knew about our having done it. Նրանք գիտեին, որ մենք այդ արդեն արել ենք: Կամ ինքն օժանդակ բայի հետ զուգորդված հարակատար դերբայի միջոցով: They knew about our having done it. Նրանք գիտեին մեր այդ արդեն արած լինելու մասին:*

Gerund-ը ստորոգելի դերում հանդես գալիս սովորաբար թարգմանվում է անորոշ դերբայի միջոցով *Their aim was collecting all the necessary data. Նրանց նպատակն էր հավաքել անհրաժեշտ տվյալներ: The fly-wheel began moving. Թափանիվն սկսեց պտտվել:*

Ուռնչի դերում հանդես եկող gerund-ը կարող է թարգմանվել կամ անորոշ դերբայով և կամ գոյականի միջոցով *Many solids have the power of absorbing gases on their surfaces. Շատ պինդ նյութեր կարող են ներծծել գազը իրենց մակերեսին: Many solids have the power of absorbing gases on their surfaces. Շատ պինդ նյութեր ունեն իրենց մակերեսին գազի ներծծման ունակություն:*

Gerund-ը տառերե առաջադասական գործառնություն կարող է թարգմանվել դերբայական դարձվածով կամ երկրորդական նախադասության միջոցով: *After closing the circuit we measured the resistance. Փակելով շղթան՝ չափեցինք դիմադրությունը: / Հղթան փակելուց հետո չափեցինք դիմադրությունը: / Այն բանից հետո, երբ փակեցինք շղթան, չափեցինք դիմադրությունը:*

Without նախդրի հետ կապակցվելով gerund-ն արտահայտում է ժխտում *The liquid evaporated without leaving a residue. Հեղուկը գոլորշիացավ՝ նստվածք չթողնելով:*

Gerund-ի բաղադրյալ ձևերը՝ կրավորական և վաղակատար, որպես կանոն թարգմանվում են երկրորդական նախադասության միջոցով:

Ժամանակակից անգլերենում նկատվում է միտում gerund-ից առաջ գտնվող անձնական դերանունը գործածել տրական հոլովով, սեռականի

փոխարեն, ինչպես *I heard of his coming*. գործածվում է *I heard of him coming*. Այս միտումը տարածվում է նաև առարկաների վրա, որոնք gerund-ից առաջ դրվում են ուղղական հոլովով, նման կառույցներ հաճախ հանդիպում են տեխնիկական տեքստերում, այսպես օրինակ *The liquid dissolving no more substance is the proof of its saturation*. Այն, որ հեղուկն այլևս նյութը չի լուծում, ապացույց է նրա հազեցածության: Այս դեպքում gerund-ը նմանություն ունի participle-ի հետ և պայմանականորեն այն կարելի է անվանել կիսազերուհիում: Կիսազերուհիումի և participle-ի սահմանազատումը պահանջում է կոնտեքստի ուշադիր բնութայուն. ինչպես օրինակ այս նախադասության մեջ – *ing* վերջավորությամբ ձևը հանդես է գալիս participle-ի գործառույթով *The liquid dissolving no more substance is called a saturated liquid*. Այլևս նյութ չլուծող հեղուկը կոչվում է հազեցած հեղուկ:

Ի մի բերելով վերը նշվածը, կարելի է եզրակացնել, որ gerund-ը հայերեն թարգմանվում է հետևյալ միջոցներով անորոշ դերբայով կամ նրա հոլովված ձևով, գոյականով, դերբայական դարձվածով, երկրորդական նախադասությամբ:

Բայանուն գոյականն ըստ կառուցվածքի նման է պարզ gerund-ին, սակայն ի տարբերություն վերջինիս չունի որևէ բայական առանձնահատկություն, ինչպես ցույց է տրվել վերը: Նախադասության մեջ բայանուն գոյականի հիմնական (սակայն ոչ միշտ առկա) արտաքին ցուցանիշներն են հոդը, *of* նախդիրի առկայությունը հաջորդող գոյականից առաջ, նրանից առաջ ածականի առկայությունը: Երբեմն –*ing* վերջավորությամբ ձևից առաջ դրված հոդը վերաբերում է ոչ թե նրան, այլ նրան հաջորդող գոյականին, այսպես *The boiling water*. *Եռացող ջուրը*: Տվյալ դեպքում մենք գործ ունենք ոչ բայանուն գոյականի հետ, այլ participle-ի, որը կատարում է որոշչի դեր և սովորաբար տեղ է գրավում հոդի և գոյականի միջև:

Բայանուն գոյականը նախադասության մեջ հանդես է գալիս այն բոլոր գործառույթներով, որ բնորոշ են պարզ գոյականին:

Ըստ ձևի gerund-ը նման է նաև մեկ այլ խոսքի մասի, որ վերջանում է –*ing*-ով, այսինքն participle-ին: Սակայն այս ձևերի միջև գոյություն ունի նշանակալից գործառական տարբերություն և ճիշտ թարգմանելու համար դրանք պետք է տարբերակել:

Gerund-ն ունի բայի և գոյականի առանձնահատկություններ, մինչ participle I-ը բայի և ածականի: Այնտեղ, որտեղ համապատասխանում են gerund-ն ու participle I-ը, այսինքն բայական առումով, այդտեղ և համընկնում են նրանց գործառույթները: Այնտեղ, որտեղ հանդես է գալիս նրանց տարբե-

րությունը՝ gerund-ի կապը գոյականի հետ և participle I-ի կապը ածականի, այդտեղ էլ հայտնվում է նրանց գործառույթային տարբերությունը: Պարագայական դարձվածներում, որտեղ gerund-ի և participle-ի գործառույթները համընկնում են, նրանց կարելի է տարբերակել արտաքին առանձնահատկություններով. gerund-ը միշտ հանդես է գալիս նախդիրով, participle-ը՝ առանց վերջինիս:

Participle-ը, ինչպես և gerund-ը, բայի անդեմ ձև է. այսինքն այնպիսի ձև, որը չի արտահայտում ոչ դեմքի, ոչ թվի կարգ: Այդ իսկ պատճառով participle-ն ինքնին նախադասության մեջ չի կարող հանդես գալ ստորոգյալի գործառույթով: Լինելով բայական ձև՝ participle-ն ունի ժամանակային և կերպային տարբերակումներ, որոնք լիովին համապատասխանում են gerund-ի ձևերին: Ինչպես և gerund-ի, այնպես էլ participle-ի ժամանակային տարբերակումները ունեն հարաբերական բնույթ:

Present participle-ը արտահայտում է բայ-ստորոգյալի հետ համաժամանակյա գործողություն՝ *Taking the book he promised to return it soon.* **Վերցնելով գիրքը՝ նա խոստացավ դա շուտ վերադարձնել:**

Perfect participle-ը արտահայտում է բայ-ստորոգյալի գործողությանը նախորդող գործողություն՝ *Having taken the book, he went away.* **Վերցրած լինելով գիրքը՝ նա հեռացավ:**

Participle-ի գործառույթներն են՝

1. Continuous ձևով արտահայտված ստորոգյալի բաղադրիչ մաս (*to be* օժանդակ բայի հետ) թարգմանվում է սահմանական եղանակի նեոնաում: *The liquid is boiling.* **Չեղուկը եռում է:**

2. Ածական (դրվում է գոյականից առաջ) թարգմանվում է ենթակայական ռեռեայի օգնությամբ: *A floating body displaces some water.* **Լողացող մարմինը դուրս է մղում որոշ քանակով ջուր:**

3. Որոշիչ դերբայական դարձված (դրվում է որոշյալից հետո): *The atom contains a number of electrons revolving around the nucleus.* Թարգմանությունը կարելի է իրացնել երկու տարբերակով՝ ռեռեայական ռառովածի միջոցով կամ երկրորդական ստորադասական նախադասությամբ: *Ատոմը պարունակում է միջուկի շուրջը պտտվող էլեկտրոններ:* / *Ատոմը պարունակում է էլեկտրոններ, որոնք պտտվում են միջուկի շուրջը:*

4. Ժամանակի, պատճառի կամ ձևի պարագա դերբայական դարձված: Ժամանակի պարագա դարձվածները համապատասխանում են ժամանակի պարագա երկրորդական նախադասություններին, երբեմն նրանք սկսվում են *while* կամ *when* շաղկապերով, վերջիններս չեն թարգմանվում հայերեն՝ (*While*)



making one of his experiments, he was seriously injured as a result of the explosion. Այս դարձվածները կարելի է թարգմանել հետևյալ կերպ

ռեռալական դարձվածով. *Իր փորձերից մեկն անցկացնելիս նա լուրջ վնասվեց պայթյունի հետևանքով:*

զուականով. *Իր փորձերից մեկի անցկացման ժամանակ նա լուրջ վնասվեց պայթյունի հետևանքով:*

նախադաս եռոտոտական նախադասությամբ. *Երբ անց էր կացնում իր փորձերից մեկը, նա լուրջ վնասվեց պայթյունի հետևանքով:*

Պատճառի պարագա դարձվածները համապատասխանում են պատճառի պարագա երկրորդական նախադասություններին: Նրանք չեն սկսվում շաղկապով: *Knowing harmful effects of gamma rays, we took special precautions.* Թարգմանությունն իրացվում է հետևյալ ձևերով

ռեռալական դարձվածով. *Իմանալով զամնա ճառագայթների վնասակար ազդեցությունը մենք ձեռք ենք առել անվտանգության հատուկ միջոցներ:*

նախադաս եռոտոտական նախադասությամբ. *Քանի որ մենք գիտենք զամնա ճառագայթների վնասակար ազդեցությունը, մենք ձեռք ենք առել անվտանգության հատուկ միջոցներ:*

Ձևի պարագան թարգմանվում է ռեռալական դարձվածի միջոցով *We communicated with the Arctic expedition using short radio-waves.* Մենք բևեռային արշավախմբի հետ կապ էինք պահպանում կիրառելով կարճ ռադիոալիքներ:

Continuous Passive ձևով արտահայտված ստորոգյալի բաղադրիչը (to be օժանդակ բայի հետ) հայերենում արտահայտվում է սահմանական եղանակի ներկայի կրավորակաճով *The engine is being repaired.* Շարժիչը վերանորոգվում է:

Որոշիչ դերբայական դարձվածը դրվում է լրացյալից հետո և արտահայտում է գործողություն, որ տեղի է ունենում տվյալ պահին: *The test being carried out is of great significance.* Այժմ իրացվող փորձն ունի մեծ նշանակություն: Թարգմանությունը կարելի է կատարել նաև եռոտոտական նախադասությամբ միջոցով. *Փորձը, որ այժմ իրացվում է, ունի մեծ նշանակություն:* Ժամանակի կամ պատճառի պարագա դարձվածը թարգմանվում է ռեռալական դարձվածով կամ եռոտոտական նախադասությամբ: *Being placed in the open air iron rusts and deteriorates.* Բաց օդում տեղադրված երկաթը ժանգոտում է և ոչնչանում: / Երբ երկաթը տեղադրվում է բաց օդում, ժանգոտում է և ոչնչանում: Participle-ով պարագայական դարձվածներն անգլերենում երկու տիպի են

1. Participle-ով կախյալ դարձված, որտեղ participle-ով արտահայտված գործողությունը վերաբերում է տվյալ նախադասության ենթակային: Նմանատիպ դարձվածները հիմնականում արտահայտում են ժամանակի, պատճառի, ձևի պարագաներ և առհասարակ հայերեն թարգմանվում են դերբայական դարձվածով, այսպես՝ *Applying force, we produce motion. Ուժ գործադրելով՝ մենք շարժվում ենք:*

2. Participle-ով անկախ դարձված, անգլերենում կան նաև participle-ով այնպիսի դարձվածներ, որտեղ participle-ի արտահայտած գործողությունը ուղղակի կապված չէ տվյալ նախադասության ենթակայի հետ, այլ ունի իր սեփական ենթական՝ *The sun having risen, the fog dispersed.* Նման դարձվածները կոչվում են participle-ով անկախ դառնվածներ (The Nominative Absolute Participle Construction): Այս դարձվածները թարգմանվում են հետևյալ կերպ՝ ժամանակի առոագա երևույթական նախադասությամբ (*Այն բանից հետո,*) *երբ ծագեց արևը, մեզը ցրվեց:*

Պատճառի առոագա երևույթական նախադասությամբ, *Քանի որ արևը ծագեց, մեզը ցրվեց:*

Համագոտ նախադասությամբ, հետևյալ շաղկապերով՝ *ի միջի այլոց, այն պահին, երբ, սակայն, բայց*: Նման թարգմանության կարիք զգացվում է այն ժամանակ, երբ participle-ով անկախ դարձվածը հետադաս է՝ *Almost all metals are good conductors of electricity, silver being the best conductor of all. Գրեթե բոլոր մետաղները լավ էլեկտրահաղորդիչներ են, սակայն արծաթը նրանցից ամենալավ հաղորդիչն է:*

Participle-ով անկախ դարձվածների հիմնական հատկանիշներն են participle-ով դարձվածի մեջ ենթակայի դեր տանող բառի (բառախմբի) առկայությունը, ստորակետի առկայությունը, որը միշտ առանձնացնում է participle-ով անկախ դարձվածը:

Participle II (Past participle) (բայի III ձևը) համապատասխանում է հայերենի հարակատար և ենթակայական դերբայներին: Այսպես օրինակ՝ *asked-հարցրած, հարցվող; taken- վերցրած, վերցվող:*

Participle II-ը բայական անդեմ ձև է, որը նախադասության մեջ ստորոգյալի դերում ինքնուրույն հանդես գալ չի կարող: Այն կարող է լինել միայն perfect և passive ձևերի բաղադրիչ:

Ունենալով ածականական և մակբայական առանձնահատկություններ՝ participle II-ն ինքնուրույն կիրառվելիս նախադասության մեջ հանդես է գալիս հետևյալ գործառույթներով՝ որոշիչ, ածականական վերադիրով դերբայական

դարձված, պարագա: Սանրամասները այս գործառույթները և նրանց թարգմանության միջոցները:

Որպես որոշիչ past participle-ը գրավում է լրացնող բառին նախորդող դիրք. թարգմանվում է դերբայ որոշչի միջոցով, կրավորական ձևով: *The described method is widely used in electroplating. Նկարագրված մեթոդը լայնորեն կիրառվում է էլեկտրապլաստիկայում:*

Այն դեպքում, երբ participle-ը գլխավորապես արտահայտում է բայական նշանակություն, այն գրավում է լրացյալին հետադաս դիրք: Նման participle-ը համապատասխանում է հայերենի երկրորդական նախադասությանը: *We used all the methods recommended. Մենք կիրառեցինք բոլոր մեթոդները, որ առաջարկվել էին:* Կամ նախադաս դերբայական որոշչին *Մենք կիրառեցինք բոլոր առաջարկված մեթոդները:*

Ածականական վերադիրով դերբայական ռառձված (այսինքն պարզաբանող բառախմբով կամ կողմնակի անդամներով participle) միշտ հետադաս է լրացյալին և թարգմանվում է դերբայական դարձվածով: *A substance is composed of tiny particles called molecules. Նյութը բաղկացած է մոլեկուլներ կոչվող մանրագույն մասնիկներից:* Թարգմանությունը կարելի է իրացնել նաև երկրորդական նախադասության միջոցով, այսպես՝ *Նյութը բաղկացած է մանրագույն մասնիկներից, որոնք կոչվում են մոլեկուլներ:*

Դերբայական դարձվածը կարելի է դիտել իբրև առանձին կառույց և նրա մեջ հնարավոր է առանձնացնել լրացումներ (խնդիր, պարագա) և կապակցված այլ անդամներ (ենթակա ևն), որոնք կոչվում են *կողմնակի անդամներ*<sup>3</sup> կողմնակի խնդիր, կողմնակի պարագա, կողմնակի ենթակա են ի տարբերություն դիմավոր բայի համապատասխան անդամների<sup>3</sup>:

Պարագա, past participle-ը հանդես է գալիս նաև ժամանակի և պատճառի պարագայի գործառույթներով, այն կարող է ենթակայի նկատմամբ գրավել ինչպես նախադաս, այնպես էլ հետադաս դիրք: *Placed in a vessel, a gas fills it completely. Կամ A gas placed in a vessel fills it completely. Մնորի մեջ տեղադրելիս՝ գազն ամբողջությամբ լցնում է այն:*

Հաճախ այս գործառույթով հանդես եկող participle-ն ուղեկցվում է when կամ if կապերով: *When heated, mercuric oxide decomposes rather readily. Տաքանալիս՝ սնդիկի օքսիդը հեշտությամբ քայքայվում է:* Նման կառույցների

<sup>3</sup> Հ.Չ.Պետրոսյան «Հայերենագիտական բառարան» դերբայական դարձված բառահոդված:



թարգմանությունը կարելի է իրացնել հետևյալ կերպ. օրինակ՝ *When heated solids expand little as compared with liquids.*

Դեռեառով. *Տաքանալիս՝ պինդ նյութերը ընդլայնվում են համեմատաբար ավելի քիչ. քան հեղուկները:*

Եռոտոողական նախադասությամբ. *Երբ պինդ նյութերը տաքանում են, նրանք ընդլայնվում են համեմատաբար ավելի քիչ. քան հեղուկները:*

Կառավ գոյականի օգնությամբ. *Տաքացման հետ պինդ նյութերը ընդլայնվում են համեմատաբար ավելի քիչ. քան հեղուկները:*

Infinitive-ը (բայի I ձև) անդեմ ձև է, պատասխանում է ի՞նչ անել հարցին, օրինակ՝ to read-կարդալ: Infinitive-ի ձևաբանական ցուցիչն է to մասնիկը: Infinitive-ը gerund-ի նման միայն անվանում է գործողությունը, սակայն ցույց չի տալիս ոչ դեմք, ոչ թիվ: Այն, ինչպես և մյուս անդեմ ձևերը, չի կարող համաձայնեցվել ենթակայի հետ և, հետևաբար, նախադասության մեջ որպես ստորոգյալ ինքնուրույն չի կարող հանդես գալ: Infinitive-ը, ինչպես և gerund-ը, ծագել է գոյականից, և gerund-ի նման նախադասության մեջ կարող է հանդես գալ գոյականի գործառնությով: Infinitive-ի և gerund-ի գործառնությամբ սերտությունը արտահայտվում է նրանով, որ շատ դեպքերում հավանական է մեկ ձևի գործածումը մյուսի փոխարեն: Կատարելով գոյականի գործառնությամբ infinitive-ը դրա հետ զուգահեռ ունի նաև մի շարք բայական հատկություններ:

Այն կարող է ընդունել ուղիղ խնդիր: *He decided to raise the temperature. Նա որոշեց բարձրացնել ջերմաստիճանը:*

Լրացվել մակբայով՝ *They wanted to start at once. Նրանք ցանկացան անմիջապես սկսել:*

Հայերենն ունի infinitive-ին համապատասխանող երկու ձև՝ *գրել* - to write, *գրվել* - to be written. Անգլերենի indefinite-ի ձևերը արտահայտում են համատեղ գործողություն ստորոգյալի գործողության հետ: Նրանք չեն ճշգրտում infinitive-ով արտահայտված գործողության կապը ժամանակի հետ, այդ իսկ պատճառով հայերեն թարգմանությունը կարելի է իրացնել պարզապես անորոշ դերբայով: *They wanted to introduce a new system. Նրանք ցանկացան ներկայացնել նոր համակարգ:*

*Perfect* ձևերը արտահայտում են ստորոգյալի արտահայտած ժամանակին նախորդող գործողություն և հայերեն թարգմանվում են վաղակատար ներկայով՝ *He is expected to have done his work. Ենթադրվում է, որ նա ավարտել է իր աշխատանքը:* Infinitive-ի գործառնությները նախադասության մեջ և նրա թարգմանության ձևերը հայերենում իրացվում են

ստորոգյալով *To transmit the image by radio has become a practical possibility not so long ago*. Ինֆինիտիվ-ենթակայի թարգմանությունը կատարվում է հայերենի անորոշ դերբայով կամ բայանուն գոյականի միջոցով: Պատկերը ռադիոյով հաղորդելը հնարավոր է դարձել համեմատաբար վերջերս: Պատկերի հաղորդումը ռադիոյով հնարավոր է դարձել համեմատաբար վերջերս: Երբեմն, հատկապես երբ Ինֆինիտիվ-ն ուղեկցվում է կողմնակի անդամներով, այն դրվում է ստորոգյալից հետո, իսկ նրա տեղը զրավում է *it* ձևական ենթական, որը և չի թարգմանվում *It is difficult to liberate an active element from a compound*. Դժվար է անջատել ակտիվ տարրը բաղադրությունից: Ինֆինիտիվ-ը կարող է հանդես գալ բաղադրյալ ստորոգյալի մի մաս դարձվածով «ստորոգելիական վերադիր դերբայական դարձված»: *Uranium is known to possess the highest atomic weight*. Հայտնի է, որ ուրանը ամենամեծ ատոմային կշիռ ունեցողն է: Անգլերեն նախադասության մեջ ստորոգյալ է ոչ միայն *is known* բառը, այլև նրան կապված Ինֆինիտիվ-ով խումբը, այսինքն կապակցությունը *Uranium... to possess the highest atomic weight* (այն փաստը, որ ուրանն ունի ամենամեծ ատոմային կշիռը): Բայերի մեծամասնության համար այս դարձվածի բնորոշ հատկանիշն է Ինֆինիտիվ-ի համակցությունը կրավորական ձևի հետ (*is known + to possess*): Այս կառույցը թարգմանվում է անդեմ կամ անորոշ-դիմավոր ձևով, որպես ստորոգյալով նախադասություն (հայտնի է, ենթադրվում է, ասվում է և այլն), որին հետևում է երկրորդական նախադասություն *Oxygen is known to be colourless*. Հայտնի է, որ թթվածինն անգույն է: Նման կառույցը կարելի է թարգմանել նաև որպես անդեմ նախադասություն՝ *Ինչպես հայտնի է, թթվածինն անգույն է*: Հարկավոր է նշել, որ Ինֆինիտիվ-ով նախադասության մեջ հաճախ գոծառվում են այնպիսի բայեր, ինչպիսիք են *to seem, to appear, to prove* և այլն:

Բաղադրյալ անվանական ստորոգյալի մաս. *The purpose of this catalyst is to accelerate the process of chemical reaction*. Թարգմանությունն իրացվում է անորոշ դերբայի միջոցով *Այս կատալիզատորի նպատակն է արագացնել քիմիական ռեակցիայի ընթացքը*:

Որպես բաղադրյալ ստորոգյալի մաս մոդալ բայերով կառույցների հետ, որոնցից հետո *to* մասնիկը սղվում է: Հայերեն թարգմանությունն իրացվում է հարկադրական եղանակով: *All the progressive people must fight for peace*. Բոլոր առաջադեմ մարդիկ պետք է պայքարեն խաղաղության համար: Հաճախ մոդալությունն իրացվում է *to be* և *to have* բայերի միջոցով, որոնցից հետո դրվում է Ինֆինիտիվ *The voltage is to be measured*. Լարումը պետք է

չափել: *He had to start the experiment at noon. Նա փորձը պետք է սկսեր կեսօրին:*

Որոշ բայերի հետ, որ առանց infinitive-ի չեն արտահայտում ավարտուն միտք. օրինակ՝ to want *ցանկանալ*, to like *հավանել*, to intend *նպատակադրվել*, to hope *հուսալ*, to promise *խոստանալ*, to begin *սկսել* և այլն: *We hoped to obtain good results. Հուսով էինք ստանալ լավ արդյունքներ:*

Ուղեկցվում է այնպիսի կապակցություններով, ինչպիսիք են՝ to be going, to be about. To be going կապակցությունը, որին հետևում է infinitive-ը, տալիս է որևէ գործողություն անելու մտադրության գաղափար. որը արտացոլվում է infinitive-ի մեջ և թարգմանվում է՝ *մտադրվել*, *պատրաստվել* բայերով: *We are going to build the largest atomic pile in the world. Մենք մտադրվում ենք կառուցել աշխարհի ամենամեծ ռեակտորը:* To be about կապակցությունը infinitive-ի հետ տալիս է գործողությունն սկսելու մտադրվածության գաղափար՝ infinitive-ով արտահայտված և թարգմանվում է՝ *արդեն պատրաստվել*, *պատրաստ լինել*: *He was about to start, but the engine suddenly stopped. Նա արդեն պատրաստ էր ծանապարհվելու, սակայն շարժիչը հանկարծ կանգ առավ:* Այս դեպքերում թարգմանությունն իրացվում է հայերենի անորոշ դերբայի սեռական հոլովով:

Որպես խնդիր infinitive-ը հանդես է գալիս ուղիղ խնդրի գործառույթով միայն այն դեպքերում, երբ արտահայտում է գործողություն, որը կատարվում է ոչ թե ենթակայի, այլ խնդրի կողմից: *He asked us to return. Նա խնդրեց մեզ վերադառնալ:*

Infinitive-ը հանդես է գալիս for նախորդով սկսվող բաղադրյալ խնդրի դերով: Նման infinitive-ը ըստ իմաստի կապված է ոչ թե ստորոգյալի հետ, այլ նախդիրն հետևող բառի հետ, որը և կատարում է ստորոգյալի պաշտոն infinitive-ի համեմատ: Նման infinitive-ը թարգմանվում է կապերի կամ գոյականների օգնությամբ: Infinitive-ը կարող է լինել բաղադրյալ խնդրի մաս «խնդիր-infinitive կառույց»: *We expect him to come. Ենթադրում ենք, որ նա կգա:* Այս կառույցում խնդիրն է ոչ միայն հոլովված him դերանունը, այլև նրան հետևող to come անորոշ դերբայը, այսինքն՝ ողջ կառույցը միասին վերցրած՝ him to come (*այն փաստը, որ նա կգա*): Այս կառույցը թարգմանվում է երկրորդական նախադասության միջոցով, որտեղ ուղղականով դրված բառը ենթակա է, իսկ նրան հաջորդող բայը դրվում է ենթադրական եղանակով և խաղում ստորոգյալի դեր:

Infinitive-որոշիչը միշտ նախորդում է լրացյալին: Թարգմանությունն իրացվում է հետևյալ ձևերով:

Անորոշ դերքայի հոլովված ձև *Automation is one of the ways to increase productivity.* Ավտոմատացումը արտադրողականությունը բարձրացնելու միջոցներից մեկն է:

Դերքայական դարձվածով *The wire to connect the terminals is 10 meters long.* Հանգույցները միացնող մետաղալարն ունի 10 մետր երկարություն:

Երկրորդական նախադասությամբ *Voltage, resistance, and capacity are the three important properties to influence the flow of current in a circuit.* Լարումը, դիմադրությունը և հզորությունը այն երեք կարևոր հատկություններն են, որոնք ազդում են շղթայով հոսանքի անցման վրա:

Հաճախ infinitive-որոշիչը փոխարինում է երկրորդական նախադասությամբ արտահայտելով պարտադիր լինելու երանգով ապագայում կատարվելիք գործողության իմաստ:

Infinitive-ը հաճախ գործածվում է the first, the last բառերի հետ: Նման դեպքերում թարգմանությունը կատարվում է անցյալ կատարյալ ժամանակով *He was the first to prophesy the wonderful prospects of jet propulsion.* Նա առաջինն էր, որ կանխագուշակեց ռեակտիվ շարժիչի հիանալի ապագան:

Նայատակի աառազա (երբեմն in order to նախդրով): *The substance was placed in a cooling mixture (in order) to reduce its temperature.* Նյութը դրվել էր սառը խառնուրդի մեջ՝ քերմաստիճանն իջեցնելու համար: Թարգմանությունն է հայերենի անորոշ դերքայի հոլովված ձևը կապով: Կարելի է գործածել նաև բայանուն գոյական սեռական հոլովով և կապով: *Ջերմաստիճանի իջեցման համար նյութը դրվեց սառը խառնուրդի մեջ:*

Անդրադառնալով վերլուծված նյութին՝ կարելի է եզրակացնել, որ թարգմանության միջոցը հաճախ թելադրվում է ոչ թե նախադասության մեջ անդեմ ձևերի կատարած գործառույթներով, այլ կոնտեքստով, հայերենի քերականական միջոցների և ձևերի այս կամ այն հարմար գործածությամբ:

### Գրականության Ցանկ

Քրոմ /1931/ George O. Curme, "A Grammar of English language", Boston, 1931:

Պետրոսյան /1987/ Հ. Զ. Պետրոսյան, «Հայերենագիտական բառարան», Երևան 1987: